



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ի Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ա Ր Ա Ն
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Հ Ր Ա Մ Ա Ն

< 20 > հունվարի 2014 թ.
ք.Գավառ

N 21

Հ Հ Գ Ե Ղ Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Մ Ա Ր Ձ Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ո Ւ Մ
Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ա Տ Ո Ւ Ս Տ Ո Ր Ա Բ Ա Ժ Ա Ն Ո Ւ Մ Ն Ե Ր Ա Տ Ե Ղ Ծ Ե Լ Ո Ւ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով „Գնումների մասին„ Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կանոնադրության 23-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված „Գնումների գործընթացի կազմակերպման մասին„ կարգի 13-րդ կետի պահանջները

հրամայում եմ՝

1. 2014 թվականի Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվող գնումների գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել պատասխանատու ստորաբաժանումներ.

1/ քաղաքաշինական՝

Զոհրաբյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ, ստորաբաժանման ղեկավար

Խաչատրյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Մելքոնյան Գ. – մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ

Հողաբաշյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ

2/ կրթական և մշակութային՝

Սաֆարյան Հ. – մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության բաժնի վարիչ, ստորաբաժանման ղեկավար

Չարվադարյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի վարիչ

Օհանյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

Հոդաբաշյան Վ. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ

3/ աշխատակազմի պահպանման ծախսերի՝

Մուշեղյան Յու. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ, ստորաբաժանման ղեկավար

Խաչատրյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի վարիչ

Բադեյան Ա. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

Օհանյան Ս. – մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



Ս. ԽԱՂԱԹՅԱՆ